

սաստկանայր մարտ պատերազմին: 5 Ապա առաքեր թագաւորն Յայոց զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն, եւ զիշխանն մեծի Ծոփաց զՄար, եւ զիշխանն Ծոփաց Շահէի Ներսէհ, եւ զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, եւ զիշխանն Յաշտենից զԴատ, եւ զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զաւրաւք: 6 Ապա չոզան յաղթեցին զաւրացն Պարսից, եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենայն. եւ սպանին զբդեաշին, եղբարքք եւ որդւովք իւրովք հանդերձ: 7 Բայց զաղջիկ մի զդուստր Նորածին<sup>1</sup>, եւ զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ: 8 Եւ իբրեւ այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն, ետ արքայ զաղջիկնի կնութիւն սիրելոյն արքայի Վաղինեկայ սիւնոյ, եւ զտունն Աղծնեաց. եւ արար զնա բդեաշխ եւ պայազատ տան Նորուն: 9 Ժամանզն բազմացաւ, եւ հանդերձ աշխարհաւն եւ ամենայն ուժովն կայր բդեաշխն Վաղինակ ի ծառայութեան արքային հանապազ: 10 Բայց յորդուոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զաւրավարն Յայոց Վաչէ, եւ անդ ապրեցաւ թագուցեալ ի տան Նորա: 11 Որ առ յապա ժամանզ տան Նորա լինէր: 12 Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր, որոյ անունն խեշա<sup>2</sup> կոչէր:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մծբնայ:

2 Չայնու ժամանակաւ խաղաց զնաց մեծ եպիսկոպոսն մծբնացոց, այր սքանչելի ծերունի, վաստակասեր ի գործս ճշմարտութեան, որում անունն Յակոբ, փոխանակ ազգան պարսիկ<sup>3</sup> կոչէր, այր ընտրեալ լլստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Յայոց, ի լեառնն Սարարադայ ի սահմանս Այրայրատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց. այր լի շնորհաւքն Զրիստոսի, որպէս զաւրութիւնք նշանաց եւ արուեստից լինէին ի ձեռաց Նորա: 3 Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ մեծաւ տենչանաւք աղաչէր զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ Նա ի ջրհեղեղէն. քանզի զամենայն ինչ զոր հայցեր, առնոյր ի Տեառնէ: 4 Ապա մինչդեռ ելաներ ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայսն անապատին սարարատեան լերինն. աշխատեցան եւ ծարաւեցան Նա եւ որք ընդ նմայն էին: 5 Ապա դներ ծունր մեծն Յակոբ ի վերայ երկրին, եւ կայր յաղաւթս առ Տեր. եւ ի տեղուջն՝ ուր եղեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց աղբիւր, եւ արբին Նա եւ որ ընդ նմայն էին. որ մինչեւ ցայսաւր ասէն այնմիկ

1 *Յորին միում*՝ Նորա ածին

2 *Յորին միում*՝ խելա

3 *Յորինակի միում չիք*՝ փոխանակ ազգան պարսիկ